




Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և աօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեղումով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Ազնւական և գիւղական կալուածական բան-
կեր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ խմբագրին.
Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ թիւրքաց Հայաս-
տանից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լու-
րեր.—ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՆՆԵՐ.—ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բժշկի զրոյց-
ները.

ԱԶՆԱԿԱՆ ԵՒ ԳԻՒԳԱԿԱՆ ԿԱԼՈՒԾԱԿԱՆ
ԲԱՆԿԵՐ

Մշակի № 23-ի մէջ խօսելով ազնւա-
կան կալուածական բանկերի մեր երկրի
մէջ հիմնելու մասին, մենք աշխատեցինք
ցոյց տալ որ այդ տեսակ կրեդիտային հաս-
տատութիւնների մեր երկրում իրագործու-
մը անյայտելի դժուարութիւնների պիտի
հանդիպէ: Այդ դժուարութիւնները երկու
տեսակ են. նախ մեր կալուածատէրերը
իրանց չեն պարագայում իրանց կալուածնե-
րի տնտեսութեան, ուրեմն իրանց ձեռք
բերելի երկար-ժամանակայ կրեդիտը կա-
տարելայէս աւելորդ բան կը լինի իրանց
համար, և երկրորդ մեր ազնւականների
կալուածները դեռ ևս երկար ժամանակ
անհասարակ կը լինի դրաւ դնել կալուածա-
կան բանկում, փոխառութիւն ստանալու
նպատակով, քանի որ օրէնքը պահանջում
է որ դրաւ դրովը կալուածները չափած
ու սահմանված լինեն և բացի սրանից
ազատ լինեն իրանց մէջ գտնվող ուրիշ
հողատիրութիւններից, շինականների բա-
ժիններից (նաղէներէն):

Մեր վերոյիշեալ յօդուածում մենք, առ-
հասարակ, աշխատեցինք ապացուցանել, որ
ոչ թէ միայն ազնւական կալուածական
բանկեր, բայց և որ և է կրեդիտային
հաստատութիւններ մեր երկրի ազնւական
կալուածատէրերի համար կատարելայէս
աւելորդ հաստատութիւններ են, քանի որ
մեր ազնւական կալուածատէրերը ամենեւին
չեն գրաւվում և միջոց էլ չունեն գրաւվե-
լու իրանց հողերի տնտեսութեամբ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐԸ

IV

Հիւանդի պահպանողութիւնը.—Այլ և այլ հի-
ւանդութիւններով բարդված քրոմէշը.—Բժշկու-
թեան եղանակները տարբերութիւնը միատեսակ
հիւանդների առանձնապատկերութիւնների վերա-
բերմամբ.—Նախապաշտպանողական միջոցներ.

Այլ և այլ հիւանդութիւններով բարդված քրո-
մէշը կանոնաւոր ընթացք ունի, ինչն իրան է
անցնում, բաւական է միայն առողջապահական
կանոններին համաձայն հոգատարութիւն ունե-
նալ հիւանդի վրա և հարկաւոր ժամանակ գործ
դնել մի քանի թիթի անվնաս միջոցներ, որ կա-
րելի է կատարել առանց բժշկի ներկայութեան
ևս:

Հիւանդին տեղաւորելու համար ընտրում են
բնակարանի աւելի մեծ սենեակը, որը պիտի հող-
մասարկի օրը մի քանի անգամ, կից սենեակնե-
րի լուսամուտները բանալով, իսկ ամառ ժամա-
նակ լուսամուտները կարելի է ամբողջ օր բաց
թողնել: Նոյն ու հեղձուցիչ օդ ունեցող սենեակ-
ները քրոմէշի կանոնաւոր ընթացքը խանգա-
րում են և հիւանդութիւնը բարդացնում: Սենեա-
կի տաքութիւնը պիտի պահել թեթիկի ջերմա-
չափով 13° կամ 14° աստիճանի և ոչ աւել: Սե-

Անդրկովկասի մեծ մասը պարսից տիրա-
պետութեան տակ էր գտնվում, իսկ պար-
սից հողատիրութեան դադարելու հե-
տեւան էր. հողը ոչ ոքին չէ պատկանում,
այլ պատկանում է Ալլահին, և այդ պատ-
ճառով նա պետութեան, կամ աւելի լաւ է
ասել պետութեան ներկայացուցչին, ուրիշ
խօսքերով երկրի վրա Ալլահի ներկայա-
ցուցչին, շահին, սեփականութիւնն է, և մաս-
նաւոր սեփականութիւն չէ կարող լինել:
Շահը կարող էր, այս կամ այն պաշտո-
նային վարձատրելու նպատակով ժամանա-
կաւորացնել տալ նրան հողը վայելելու հա-
մար: Երբ ռուսները տիրեցին երկրին, հո-
ղերը սեփական ձանաչվել մասնաւոր անձանց,
կալուածատէր ազնւականների սեփակա-
նութիւն, բայց հողի իրական տէրերը մը-
նացին գիւղացիները, որոնք բնակվում են
նոյն հողի վրա և մշակում են այդ հողը,
վճարելով օրէնքով ձանաչված հողատիրոջ
մի յայտնի տարեկան կապալատուրը հողի
եկամուտից:

Պարզ է որ կալուածատէրերը, լինելով մի-
միայն մի տեսակ աւատական իշխաններ,
և իրանց չը տիրելով իրանց հողերին, ու-
րեմն վրա, բացի սրանից, տեղ տեղ սփռված
են և հողի վրա բնակվող գիւղացիներին նա-
ղէնները, կալուածատէրերը, ասում ենք,
ոչինչ կապելով կապված չը լինելով իրանց
հողի հետ, բացի իրանց իրաւունքից գիւ-
ղացիներից տարեկան որոշ կապալատուրը
ստանալու, պարզ է որ կուզենային ազատ-
վել իրանց այդ անորոշ, կաշկանդող դրու-
թիւնից: Նրանք չեն կարող ոչ իրանց պա-
րագել իրանց հողերի տնտեսութեամբ, ոչ
էլ ծախել իրանց հողերը, քանի որ մին-
չէ այժմ հողերի կալուածատէր մասը ու-
րոշված չէ նոյն հողերի գիւղացիների բա-
ժիններից: Նրանք չեն կարող նմանապէս
գրաւ դնել այդ հողերը, որովհետեւ ընդ-
հանուր հողի կալուածական մասը չափած
ու սահմանված չէ նոյն հողի վրա գտն-
վող գիւղացիական բաժիններից: Նրանք,
ուրեմն կը կարողանային ծախել իրանց
հողերը մասը միմիայն իրանց հողի վրա
բնակվող գիւղացիներից:

Բայց ինչպէս յետ գնեն գիւղացիները

իրանց հողատէրերից իրանց բաժինները,
նրանք կարելի ունեն գրա համար գրամա-
կան միջոցների, իսկ փողը նրանք կարող
են ձեռք բերել միմիայն կալուածական
գիւղական բանկից: Բայց այդ տեսակ յետ
գնողական գործողութիւնը կատարելու հա-
մար հարկաւոր է գիւղացիներին երկար-
ժամանակեայ կրեդիտ, ուրեմն այդ կրե-
դիտը ստանալու համար գիւղացիները
պէտք է գրաւ դնեն իրանց հողային բա-
ժինները կալուածական բանկի մէջ, վճա-
րելով բանկին իրանց փոխառութեան հա-
մար, դրամագլխի հանգանակով. ընդամենը
5% տարեկան: Տեղիւր բարձր չէ և, ի
հարկէ, եթէ գիւղացիներին համայնքը հը-
նար ունենար գրաւ դնել իր հողաբաժին-
ները գիւղական կալուածական բանկի մէջ,
թէ իր և թէ կալուածատէրերի հողա-
բաժինները հետզհետէ յետ գնելու համար,
—գիւղացիք հեշտութեամբ կը վճարէին
բանկին վերոյիշեալ տարեկան 5 տոկոսը:

Բայց այդտեղ մի ուրիշ արգելք էլ կայ
այդ տեսակ նախագիծ իրագործելու հա-
մար:

Ռուսաստանի ներքին նահանգներում,
ձորաների ազատութիւնից յետոյ, գիւղա-
ցիների հողաբաժինները (նաղէներ), կա-
լուածատիրոջ ընդհանուր հողից բաւական
հեշտութեամբ որոշվեցան: Այդ գործողու-
թեան հեշտացնելու միտնալուց նպաս-
տում էր թէ երկրի տեղագրական կողմից
միակերպ ու տափարակ լինելը և թէ կլի-
մայի հաստատութիւնն ու միակերպու-
թիւնը. գիւղացիական նաղէները բոլորն
էլ քշվեցան դէպի մի կողմ, իսկ միւս կողմ
մնաց կալուածատիրոջ հողը: Մեր երկրում
անհասարակ է այդպէս հեշտ և կտրական
կերպով վճռել հարցը և իրագործել գիւ-
ղացիների նաղէների բաժանվելը կալուա-
ծատէրերի սեփական հողերից. մեր երկրի
սարուն երկիր է, և նայելով այս կամ այն
տեղի տեղագրական դիրքին, հողի իւրա-
քանչիւր կտորը ենթարկված է ջուկ ջուկ
կլիմային:

Մեր երկրի ազնւականների հողերի վրա
գտնվող գիւղացիների նաղէները երբէք չեն
կուտակված կալուածքի մի տեղում, այլ կը-

տոր կտոր են սփռված ամբողջ կալուածքի
մակերեսով միայն Գիւղացիներ երբէք չի
համաձայնվի, ինչպէս Ռուսաստանի ներ-
քին նահանգների տափարակ երկրում, որ
իր հողաբաժինները կուտակված լինէին
մի տեղում: այդ տեսակ կարգադրութիւն
կորստաբեր կը լինէր իր նիւթական շա-
հերի համար: Երկրորդ սարուն, անհաւա-
սար լինելով, գիւղացիները բնակվելով կա-
լուածատիրոջ հողի վրա, իրանց սեփական
նաղէները այսպէս են կարգադրում: դի-
ցուր սարի, կամ բլուրի գլխին նրանք ցո-
սարի կամ գարու վար ու ցանք են անում,
սարի հարաւային դռնովայրը նրանք յատ-
կացնում են խաղողի այգիներին, իսկ սա-
րի կամ բլուրի ստորոտում, ուղիղ բնա-
կութեան կողքին, նրանք բանջարանոց են
գարգացնում և այլն: Այսպիսով գիւղացի-
ների բաժինները կալուածատիրոջ հողի
վրա չեն կազմում մի ամբողջութիւն, այլ
բաղկացած են միմեանցից կտրված, մի-
մեանց մէջ կապ չունեցող հողի կտորնե-
րից: Գիւղացու հաշիւը պարզ է և գործ-
նական, նա ձանաչում է երկրի յատկու-
թիւնը, ուսումնասիրում է գործնական
կերպով հողի առանձնապատկերութիւնները,
գիտէ, հողի տեղագրական դիրքի համե-
մատ, այս կամ այն կտոր հողի կլիմայա-
կան առաւելութիւնը և այս ու այն բեր-
քի աշոգութեան համար յարմարութիւնը:
Գիւղացին այսպէս է հարւում. եթէ բլու-
րը ցորենի արած, խաղողի այգին ու բնա-
ջարանոցը մէկ տեղ, հողի մի մակերեսով
վրա լինեն, մի գեղեցիկ օր, երբ կամ ան-
սպասելի ցուրտը կը հասնի, կամ կարկուտ
կը գայ,—ամեն բան մի անգամից կը կոր-
չի: Բայց բաժան-բաժան անելով իր հողի
կտորները նա այսպէս է հարւում: եթէ
ցուրտ կը լինի սարի գլխին,—կարող է
այնքան ցուրտ չը լինել սարի ստորոտում,
եթէ կարկուտ գայ ներքեւում,—կարող է
հողաբաժին վերել մասում չը գայ, կամ
եթէ վերելում գայ,—գուցէ ներքեւում չը
գայ, և այլն....

Մի խօսքով մեր գիւղացիները երբէք
չեն համաձայնվի, որ իրանց հողաբաժին-
ները մի տեղ կուտակված լինեն: Իսկ ջուկ-

Չացած երեւոյթները շուտով 12 կամ 20 ժամկայ
մէջ հիւանդին մահ են պատճառում: Մարմնի ընդ-
հանուր վարակումը քրոմէշի թոյնով այնքան
սաստիկ է լինում, որ հիւանդին կըտրուի են ի-
րանց կեանքը մի քանի ժամկայ մէջ սրտի կա-
թուածահարութիւնից: Քրոմէշի հետ բարդված
հիւանդութիւններից կարելի է յիշել այստեղ ա-
ւելի ստէպ երեսացող հիւանդութիւնները, որպիսիք
են, կոկորդի դիֆթերիա, երկխմուշների բոր-
բոքումը, սրտի ներսի մաշկի բորբոքումը, սըն-
թաց յօդացալը—բէլմաթիդը: Նրանք քրոմէշի
ժանր դէպքերն աշոգ անցնելուց յետոյ, անբու-
ժելի հիւանդութիւնների հետեանգնել են մնում,
օրինակ խլութիւն, աչքերի պակասութիւն, սրտի
արատ, անդամալուծութիւն, ջրղողութիւն: Դը-
րանց մասին այստեղ մանրամասնաբար խօսեցն
աւելորդ է անօրոտ եմ համարում, քանի որ
այդ տեսակ բարդված հիւանդութիւնները բժշկի
օգնութեանն են կարօտ: Բարդված քրոմէշի դէպ-
քերն այնքան տարբեր պատկեր են ներկայացնում,
որ փորձված բժիշկն անգամ սպառազինվում է իր
բոլոր գիտութիւններով և իր հնարագիտութեամբ
ու հմտութեամբ աշխատում է կանոնաւորել հի-
ւանդի վերին աստիճանի խանգարված առողջու-
թիւնը: Այլ հիւանդութիւններով բարդված քրոմէշի
պարզ և դիւրամբուելի նկարագրութիւնը դժուար
է ընթերցողի համար և անապատակ. պարզեցն
մեր միտքը:

Բժիշկը հիւանդին ընկնելով աշխատում է դի-
տել և դտնել այն բոլոր անկանոնութիւնները,
որոնք հիւանդի առողջութեան խանգարումից են

ջով, միմեանցից կտրված, միմեանցից բաժան-բաժան լինելով՝ գիւղացիների այդ նա-դէշները, որոնց այդպիսով դժուար է սահ-մանել կալուածատիրոջ ընդհանուր հողե-րից, չեն էլ կարող գիւղական կալուածա-կան բանկի մէջ գրաւ դրվել, քանի որ հողը գրաւ ընդունելու, փոխառութիւն տալու նպատակով բանկը անպատճառ պահանջում է, որ գրաւ դրվող հողաբա-ժինը որոշված, չափված ու սահմանված լինի:

Ուրեմն ի՞նչ ելք կայ այդ դրութիւնից, ի՞նչ միջոց կայ մեր գիւղացիների համար օգտակար գիւղական կալուածական բան-կից իրանց հողաբաժինների յետ գնողա-կան գործողութիւնը և նոր հողերի առ-նելը աջողութեամբ իրագործելու համար:

Միակ ելքն այն է, որ կառավարութիւ-նը, խղճմտաւոր կերպով ուսումնասիրելով հարցը, նախ՝ համաձայնութիւն կայացնէ գիւղացիների և կալուածատերերի մէջ, իւրաքանչիւրին պատկանող հողաբաժին-ների որոշման մասին, շտապեցնէ հողերի սահմանաչափութեան գործը և կալուածա-տիրոջ ու գիւղացիների փոխադարձ հա-մաձայնութեամբ որոշէ գիւղական հողա-բաժինների յետ գնողական գնի ն օրմալ չափը:

Մինչև որ այդ բոլորը չը կատարվի, կալուածական բանկերի գործողու-թեան մտցնելը մեր երկրում այն եղանա-կով և կանոնադրութեամբ, որոնցով նրանք գործում են Ռուսաստանի ներքին նա-հանգներում, աներևակայելի է:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՐԱԿԳԻՒՆ

Թիֆլիս, մարտի 2-ին

Հանգուցեալ Բաֆֆիի գրքերի տպագրված օրի-նակները սպառվելու վրա են: Նրա առանձին հատորներով լայն տեսած աշխատութիւններից այսօր չը կան այլ ևս՝ «Փռնչի», առաջին հատորը, «Խնթը», «Կալիթ Բեդի» առաջին և երկրորդ հատորները, «Խամայի մէլիքու-թիւնները», «Ջալալեդդին», «Կայծեր» առա-ջին հատորը: Ուրի գրքը բոլորովին սպառ-ված են: Ինչպէս որ հիշեցնում եմ, երկրորդ հա-տորակութեան համար պահանջ են, երկրորդ՝ ո-րովհետև նրանք են հանգուցեալի երկու փոքրիկ զաւակները և այլիացած ամուսնու ապրուստի միակ աղբիւրը:

Բայց արդեօք ինչ ձև պէտք է տալ Բաֆֆիի

առաջացած, փաստեր է հաւաքում հիւանդու-թիւնը պարզելու համար, բացատրում է հիւան-դութեան երևոյթները, թէ առանձին և թէ նրանց մէջ եղած փոխադարձ կապը: Այս գործը, դժուար գործ է, բայց զիտութիւնից անհրաժեշտ է խիստ անաչառ ըննողութեան ձիրք ունենալ, իւրաքան-չիւր գտած փաստի համար իր տեղը որոշել, մեծ նշանակութիւն չը տալ այն երևոյթներին, որոնք ինքն ըստ ինքեան էական նշանակութիւն չու-նեն, որքան կարելի է օբյեկտիվ կերպով նայել այդ բոլոր գտած փաստերի վրա և պարզաբանել նրանց գիտութեան ճշմարտութիւններով:

Դուք չէք կարող գտնել երկու առողջ մարդ, որ իրանց անձնական յատկութիւններով միա-նման լինեն: Նմանապէս կարելի չէ ներկայացնել մի և նոյն հիւանդութիւն ունեցող երկու հիւանդ-ները, որոնց հիւանդութիւնը միանման լինէին: Ներկայացնել երկու մարդ մի և նոյն հասակով, մի և նոյն հասարակական դրութեամբ և դիպու-թէ նրանք մի և նոյն ժամանակ հիւանդացած են թոքերի բորբոքումով և մի և նոյն ժամանակ են սկսվել են բժշկվել: Այս երկու դէպքը դուք երևի կարծում էք թէ միանման են, բայց սխալ-վում էք, որովհետև հիւանդութեան ընթացքը և հետևանքը կարող են տարբեր լինել: Նայելով այդ հիւանդներին առանձին յատկութիւններին՝ Մինը դրանցից հիւանդանալուց առաջ կարող էր դանդաղ ծանր բարոյական ճնշողութեան տակ, նրա կրճատված փոքր կարող էր լինել, չըն-չառութեան միջոցները թող լինել, սրտի բաբախումն ունենալ, իսկ այս բոլորից միւս հիւանդը կարող է բոլորովին ազատ լինել: Ի

աշխատութիւնների տպագրութեանը. պէտք է նրանց ջոկ-ջոկ տպագրել, ինչպէս անում էր հե-ղինակը իր կենդանութեան ժամանակը, թէ ա-ռաւել նպատակաւորմար է մի ամբողջ ժողովա-ծու լայն ընթացք, որի մէջ մտնէին հեղինակի բոլոր ինքնուրոյն աշխատութիւնները, թէ նը-րանք, որոնք մի անգամ տպագրված են եղել և թէ նրանք, որոնք դեռ ևս մնում են առանց տը-պագրութեան: Այս հարցի լուծումը կախված կը լինի այն մասնակցութիւնից, որ հայ հասարա-կութիւնը ցոյց էր տալիս ինքնի վերաբերու-թեամբ: Բաֆֆիի մասին յետոյ երկու օրոյ հո-սանք նկատելի կերպով ընթանում էին և ընթա-նում են հայ ժողովրդեան մէջ, հասարակութիւնը մի կողմից ցանկանում է հանգուցեալի յիշատա-կը յաւերժացնել, մի վայելուչ մահաբաժան կանգ-նացնելով նրա գերեզմանի վրա, միւս կողմից նոյն հասարակութիւնը կամենում է նպաս-տել վաստակաւոր հեղինակի երկասիրութիւն-ների տպագրութեանը և լայնաշուկ օգնած լինել նրա զաւակներին և ամուսնուհին: Երկու նը-պատակի համար էլ, ինչպէս յայտնի է, նուիրա-բերութիւններ են լինում: Արձանի համար եղած նուիրատուութիւնները անցնում են այն մասնա-ժողովի ձեռքը, որ այդ նպատակը իրագործելու համար կազմակերպվել է. իսկ գրքերի տպագրու-թեան համար եղած նուիրատուութիւնները պէտք է յանձնվեն որբերի խնամակալներին, որոնք և կը հոգան այդ գործին կանոնաւոր և նպատակա-յարմար ընթացք տալու մասին, ի հարկէ, մի քանի բանիմաց մարդկանց խորհրդակցութեամբ:

Պարտք եմ համարում յայտնել, որ այս օրերս, ես, որպէս խնամակալ Բաֆֆիի օրը և անչափա-հաս զաւակներին, «Մշակ» լրագրի խմբագրութիւ-նից ստացայ այս նպատակով ժողոված երկու հարկեր իննսուն և մէկ բլբլի, եօթնասուն և մէկ կօպէկ (291 ռ. 71 կ.): Մի և նոյն ժամա-նակ սոյն երկու գրութեամբս դիմում և խնդ-րում եմ միւս յարգելի. խմբագրութիւններին և մասնաւոր անձանց, որ եթէ իրանց մօտ գտն-վում է նոյն նպատակին յատկացրած որ և է գու-մար, բարեհաճեն օր առաջ ուղարկել ինձ, որ-պէս զի ժողոված գումարին համեմատ մի որ և է լրացումն անել կարողանանք գրքերի տպա-գրութեան վերաբերութեամբ:

Ա. Մէլիք-Աղաբեանց

ՆԱՄԱԿ ԽՐԱԿԳԻՒՆ

Թիֆլիս, 1 մարտի

Բարեհաճեցէք, խնդրում եմ, երկու գրու-թեանս տեղ չնորհէ «Մշակի» մերձաւոր հա-մարներից մէկին մէջ:

Վենետիկի Միլիթարեան միաբանութիւնը ձեռ-նամուկ է եղել տպագրելու հայր Ղևոնդ Ալիշա-

վերջոյ տեսնում ենք, որ չը նայելով այդ երկու հիւանդները մի և նոյն ճիշտանդութեամբ էին տկա-րացած, այնու ամենայնիւ դրանք միանման չեն, տարբեր են և բժշկութեան եղանակին ևս տարբեր պիտի լինի: Եւ ճշմարիտ որ գործնական բժշկի համար երկու բոլորովին միանման հիւանդ չէ կարող լինել. ամեն ևս ուր հիւանդը, ճշմարիտ որ նոր հիւանդ է, նա ունի իր սեպական անձ-նական յատկութիւնները, որոնք ոչ թէ միայն տարբերվում են միւս հիւանդներից, այլ և իրանց առանձնայատկութեամբ անխորշելի բարդութիւն են պատճառում թէ հիւանդութեան ընթացքի և թէ հետևանքի վրա:

Վարակիչ հիւանդութիւնների նախապայտա-նողական միջոցը առողջապահութեան գլխաւոր մասերից միւսն է. ընդհանրապէս կարելի է ասել, որ այդ հիւանդութիւններին դէմ գործ զըը-ված միջոցները աւելի լաւ և պողպեղ են հետևանք-ներ են տալիս, քան թէ մարդկութեան միւս ֆի-զիկական նեղութիւններին դէմ միջոցները: Կան հիւանդութիւններ, որոնք առաջանում են ծերու-թեան պատճառով կազմուածքի բնական փոփո-խութիւններից: Հասարակական առողջապահու-թիւնը չէ կարող բնութեան օրէնքները փոխել և մարդկային ցեղը անմահացնել, այլ նա կարող է դիմել մարդկային կեանքի արտաքին պայմանները աւելի կանոնաւոր դարձնելու միջոցին: Իսկ մարդկային կեանքի պայմանները այնքան աւելի կանոնաւոր են, ինչքան աւելի են ծերութիւնից ա-ռաջացած մահկանացութեան դէպքերը: Հասակն առած ծեր մարդու կազմուածքի գործարարները,

նր «Այրաբատ Աշխարհ»: Շիրակի և Կիլի-կիայի բազմաբնակաւ ստորագրութիւններից յետոյ, «Այրաբատ» ծերունի նահապետի հոյա-կապ գրութեանը սոյն շարքի մէջ թէ ևս ըստ կարգին երրորդ տեղը պէտք է ընէ, բայց ներ-քին բովանդակութեան և արտաքին շքեղութեան կողմից առաջինն է լինելու: Միաբանութեան շրջաբերական յայտարարութիւններից երևում է, որ նա, «Այրաբատ», պատկերների, գունաւոր մանրանկարների, աշխարհացոյց և տեղագրական ջարտէշների և լուսատու նկարների կողմից, «Այրաբատ» մի գանձ է հայոց գրականութեան համար, մի բազմաբնակաւ շտեմարան, որի մէջ ամփոփած են հայոց վերջին պայազատու-թեան բոլոր յիշատակները: Սիւտանը հայկա-կան ասպնջականութեան վերջին յենարդին է. նա սիրելի է մեզ համար որպէս մի կողմնակի ապացոյց հայի տոկոսնութեան, անվերջութեան, վերանծնութեան և, եթէ կամքը, քրիստոնէա-կան լայն մարդասիրութեան: Բայց նա Հա-յատանը չէ, և ոչ հայոց աշխարհի նկարագրը. նա հայրենի երկրի մի հերձուածի, մի բաժան-ման, մի անջատեալ մասի նկարագրին է միայն: Եւ եթէ նա այնքան սիրելի է մեզ, չայնքան պաշ-տելի և գգուելի, որքան առաւել ևս սիրելի պիտի լինի մայր հողը, Այրաբատ Աշ-խարհը, Հին Հայաստանի պատմական փառքի և դառն ճակատագրի կենտրոնը:

Փառաստուն տարուց աւելի է, որ հայր Ալիշա-նը քրքրում է Հայաստանի անցեալն ու ներկան և սրանից մի քանի տարի առաջ միայն սկիզբը դրեց իր ընդարձակ տեղագրական գրութեանը տպագրութեան: Դրանք փոքրիկ և պարզ գրքիկ-ներ չեն, այլ ընդարձակ և մեծածախս հրատա-րակութիւններ: Ուստի դարձանալի չէ, որ վենե-տիկի միաբանութիւնը որոշել է դիմել բաժանոր-դագրութեան, որով կարողանայ մասամբ գտնէ ծածկել տպագրութեան անաղին ծախսերը «Այ-րաբատ Աշխարհի» տեղագրութիւնը բազկացած պիտի լինի 75—80 քառաւոր մեծադիր թերթե-րից:

Բաժանորդագրութիւնը կանխիկ մճամբամբ Ռուսաստանի համար 20 բլբլի է: Բաժանորդա-գրութիւնը բաց է մինչև յունիսի 30-ը 1889 թվ: Այնուհետև բաժանորդագրութիւնը փակ-վում է և գրքի գինը լինում է 40 բլբլի:

Համայն Ռուսաստանի հայոց համար բաժա-նորդագրութեան կենտրոնատեղին է Թիֆլիսի Կենտրոնական գրաւմահառանցը:

Իմ կողմից բաժանորդ գրվել ցանկացողներին դիւրութիւն տալու համար, բաժանորդագրինը չորս մասն եմ անում և առաջարկում եմ մճարել հինգ-հինգ բլբլի՝ մարտ, ապրիլ, մայիս և յու-նիս ամիսներին: Կանգնած չունեմ, որ Կովկասի, Անդրկովկասի և մայրաքաղաքների հայերը, հա-

նական կամ, ինչպէս ասում են, ծերական փո-փոխութիւնների են ենթարկվում, այլ ևս կարողու-թիւն չեն ունենում իրանց կանոնաւոր ընթացքը կատարել, ծերութեան յատուկ հիւանդութիւն-ների պատճառ են դառնում: Հասարակական ա-ռողջապահութեան զազափարին մենք աւելի կը մօտենանք, եթէ կարողանանք մարդուց հեռաց-նել ոչ թէ պատահական հիւանդութիւնները, որոնք կախումն ունեն դանդաղ անընթացի պատճառներից, այլ այն հիւանդութիւնները, ո-րոնք որոշեալ և անփոփոխ պատճառներ ունեն և որոնք առանց այդ պատճառի մի բազմ գոյու-թիւն ունենալ չեն կարող. այդ հիւանդութիւննե-րը, ինչպէս ձեզ յայտնի է արդէն, վարակիչ հիւանդութիւններն են: Բաւական է միայն հիւանդածին թոյնի բազմաբնույթ ընդլիմա-նալ և թոյլ չը տալ նրան կազմուածքի մէջ մտնելու, որպէս զի խնդիր մճուած լինի և մարդ-կութիւնը ազատված լինի ամենամեծ չարիք-ների մէկից:

Աղգրի քաղաքակրթութիւնը շատ թէ բիշ ազ-դել է վարակիչ հիւանդութիւնների վրա, թուա-ցրել է նրանց զօրութիւնը, այնպէս որ դեռ ա-ռողջապահութիւնը գիտութիւնների շարքը չը մտած, վարակիչ հիւանդութիւնները սկսել էին կորցնել իրանց սաստկութիւնը և պատմութեան նոր շրջանում տեսնում ենք, որ նրանք համեմա-տաբար քիչ զօհեր էին տանում, քան թէ միջին դարերի ժամանակ: Իսկ մի և նոյն քաղաքակր-թութիւնը մեզ ծանօթացրեց և ուրիշ վարակիչ հիւանդութիւնների հետ. երևի Եւրոպան ծանօթ չէր լինի լուրջալի հետ, եթէ ճանապարհները հա-

յոց միջնակարգ ուսումնարանների մատենադա-րանները, հայոց գրականութեան նախաձեռնա-ղիք ուսուցիչները և վերջապէս այն բոլոր հայե-րը, որոնք թէ և մատչելի չէ Ալիշանի կրակի լեռուն, բայց որոնք իրանց նիւթական ձեռն-տուրութեամբ գիտեն մեկնաւոր հանդիսանա-հայ աշխատաւոր հեղինակներին—բոլորը, որոնք համար թանգ է իրանց հայրենի գրականութեան աճումը, իրանց մայրերկրի ուսումնասիրութիւ-նը, կը շտապեն բաժանորդ գրվել բազմալուս տակ հեղինակի այս հոյակապ աշխատասիրու-թեանը՝ յանուն իրանց անձին, ի յարգանս հեղ-նակին և ի նպատակ վենետիկի Միլիթարեան միաբանութեան, որը իր պարծանքը եղող նահա-պետի յիսն ամեայ յօրեղեանը կատարելու հա-մար պատրաստում է այս փառաւոր գործը լրա-ցնել և հեղինակին նուրբիլ իր հեղինակութեան ճոխադոյն օրինակը:

Նիկողայոս Տէր-Ղևոնդեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հիւ-ՆԱԽԻՋԵՆԱՅԵՑ մեզ գրում են: «Փետր-վարի 15-ին դիւերը տեղիս բանտի մէջ բան-տարկվածներից մի քանիսը փորձ էին արել փախչել: Բայց զինուորները վրա հասնելով, հա-ցաններ արձակեցին և փախչողները երկուսն սպանեցին, իսկ երեքին վերադարձրին»:

Ինչպէս մեզ գրում են, փետրվարի 16-ին, Հիւ-ՆԱԽԻՋԵՆԱՅԵՑ թուրք ազգաբնակչութիւնը ա-հապէս բազմութեամբ հաւաքվելով քաղաքի դուրս, մի արձակ դաշտի վրա, դմալվում էր գոմէշների կուտը: «Փաղաքի թուրք ազգաբնա-կութեան առաջնակարգ հարուստ բեկերը, ա-սում է թղթակիցը, տառնեակ ֆաւտաներով շտապում էին ականատես լինելու իրանց սեփա-կան գոմէշների կուտը՝ զմայլեցողիչ հանդիսին Դաշտը ծածկված էր անթիւ ամբողջով»:

ԱՍԻԱԲԱՆԻՑ մեզ գրում են. «Այստեղ եղանա-կը զարմանային է արդէն: Առևտուրը սաստիկ ընկած է. վաճառականների մեծ մասը անգոր-ծութիւնից թուրք է լազում, իսկ փոքրամասն հիւանդութիւնները ընթացանութեամբ է դառնում: Տեղիս հայ լրագիրներն են ստանում: Մի 30 օրինակ այլ և այլ հայոց հրատարակութիւններ են ստաց-վում այս տարի Ասիաբանում: Այդ 30 հատ հայ հրատարակութիւններից՝ 20 օրինակ «Մշակ» է ստացվում, և 10 օրինակ ուրիշ ամեն տեսակ հրատարակութիւնների»:

«Тифлисский Листок» լրագիրը լսել է, որ իշխան կառավարչապետի նախագիծը՝ բազմացնե-

ղորդակցութիւնը վերին աստիճանի չը զարգա-նար: Բայց մեր բազմից մի է նոյն քաղաքա-կրթութիւնը մեզ միջոցներ է տալիս վարակիչ հիւանդութիւններին հետ աւելի մօտ ծանօթանա-լու, շննելու նրանց յատկութիւնները, ծայրան և տարածման եղանակները, միով բանիւ նա նը-պատում է մեզ ծանօթանալ բնութեան սքող-ված կեանքի հետ: Մենք կարող ենք և պէտք է գիտակցաբար աշխատենք օգուտ քաղել քաղա-քակրթութեան փրկարար գիւտերից: Եւ ահա մենք տեսնում ենք, որ հասարակական առողջա-պահութիւնը մեծ օգուտներ է տուել մարդկա-թեանը, վարակիչ հիւանդութիւններից առաջա-ցած մահկանացութեան թիւը փոքրացել է և հետզհետէ փոքրանում է և մի և նոյն ժամանակ հասարակական առողջապահութիւնը վարակիչ հիւանդութիւնների նոյն իսկ ծաղման ժամանակի շուտով տեղի ու տեղը ոչնչացնում է հիւանդածին թոյնը, թոյլ չը տալով այլ ևս համաճարակ տա-րածվելու և երկրիներ վարակելու: Մտաբերեցէք, ընթերցող, վերջին տարիների մէջ պատահած Եւ-րոպայի քանի մի տեղերի խոշոր հիւանդութեան դէպքերը: Փաղաքակրթ աղգրի բնկերակցական ջանքով, տեղի ու տեղը բնաջնջված են եղել իր ժամանակին խօշորա առաջացող հիւանդածին միկրօբները—ստորակէտները, և ամբողջ Եւրոպան և մենք բոլորս ազատվել ենք այդ դարչելի հիւ-աւերից աղցեցութիւնից:

Բժշկապետ Տէր-Գրիգորեան (Թիֆլիսցի)

ճանր վերադարձնելը Գրանցից մեկը ուղղակի հայ երիտասարդությանը է ուղղված, իսկ մյուսը մեզ Երևանից դուրս, բուրժուական թերթերը պաշտպան է հանդիսանում հայ երիտասարդությանը: «Արձագանքը» համակրում է հայ երիտասարդությանը, վերադարձնելը է պաշտպանում: Երևանի թերթերը երևանյան է, որ մենք յարձակվում ենք հայ երիտասարդության վրա (1): Սակայն ինչպես երևում է երիտասարդությանը առնչվող շարժումները ուրիշ ոչինչ չափանիշ է հասկանում, բայց եթե այն կարելի է բերնաբերել, ապա տեղի որոնողներին, համոզմունքից զուրկ և պատճառներ չունեցող թերթերի մասին որոնողներին, որոնց միջոց հաղածել ենք և կը հաղածենք: Համոզմունք և որ և է ի դեպ ունեցող հայ երիտասարդության համար, կրկնում ենք, մեծ, շատ մեծ վերադարձնելը կը լինի համակրության տեսակ: այդպիսի մի օրգանի կողմից: Երանան մեծ վերադարձնելը է հասցնում մեզ «Արձագանքը», անուանելով մեզ «Իր հակառակորդ»: Խոստովանում ենք, որ անկարող ենք մեզ պաշտպանել այդ տեսակ վերադարձնելը դեմ: Գիտենք, «Արձագանքը» շատ է ցանկանում մեզ իր հակառակորդը տեսնել: Նա մի առանձին վայելչություն «Մշակի» մասին խոսելիս «հակառակորդը» է կոչում մեզ, բայց, թող ներվի մեզ ասել, մենք կատարեալ անպատճառ թիւն ենք համարում «Արձագանքի» և նրա գրչակների նման հակառակորդ ունենալը: Եթե «հակառակորդ» էլ մի բանի նման պիտի լինի... Եւ դադարի մի հասարակական հարցերում «Արձագանքի» նման հակառակորդ ունենալը, էլի կրկնում ենք, կատարեալ վերադարձնելը է...

Փարիզում նորեքս լոյս տեսաւ մի նոր հրատարակութեան առաջին համարը, որը նուիրված պիտի լինի ամբողջապէս Փարիզի համաշխարհային ցուցահանդիսին: Նա կրում է հետեւեալ վերնագիրը՝ «La Revue de l'Exposition universelle de 1889»: Այս հրատարակութեանը մասնակցում են թէ ֆրանսիական և թէ օտար գրչակներ: Երևան և Կիւրաբուքի բոլոր նշանաւոր ներկայացուցիչները:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Թիւ 1 մարտի: Պետերբուրգից գրում են «Düna Zeitung» լրագրին, որ շուտով Ռիգայի համայնական վարչութեան գործադիր մասերը կը նշանակվին կառավարութիւնից, որի համար և նախնադպետին կը տրվի արտակարգ լրագրութիւն: Վերջումը ձեռք առնված այդ միջոցը, եթէ կարելի լինի, կը տարածվի և Բալտիկ երկրի միւս քաղաքները վրա:

Բեռլին 1 մարտի: Վիլհելմ կայսրը մտադիր է նոյններին, իր քրոջ հարսանիքի առիթով, որը պիտի լինի Աթինում, այցելութիւն անել սուլթանին Կ. Պոլսում:

ՍՕՖԻԱ, 1 մարտի: Պահպանողական կուսակցութեան մէջ բաժանումն ընկաւ. նրա ղեկավարները վճռեցին վերակազմակերպել կուսակցութիւնը: Կուսակցութեան նախագահ մնում է Ստիլով: Նաչելիչ և Գրեկով ուղում են դուրս գալ այդ կուսակցութիւնից: Շուտով կը սկսվի հրատարակվել մամուլի մի նոր օրգան:

ՎԻԵՆԱ, 1 մարտի: Միլանի հօրեղբայրը, զենեւալ կատարելի, հրաժարվեց զինուորական բոլոր աստիճաններէն Սերբիայում և այնտեղից դուրս է գնում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի: Բանաստեղծ Ֆետին շնորհված է Բարձրագոյն պալատի սենեկապետի կոչում: Կուրսկի նահանգապետ Կոստոմարովին նշանակված է Պոլտավայի նահանգապետ:

ՏԱՄԲՕՎ, 2 մարտի: Նախկին փոխգնդապետ վարկի ընկերութեան անդամները ընդհանուր ժողովը վճռեց՝ ընկերութեան հասցրած աւելի քան 250,000 ռուբլի վնասի համար՝ պատասխանատուութեան ենթարկել խորհրդի վերատուգողական յանձնաժողովի և մասնաժողովների նախկին անդամներին:

ՓԱՐԻԶ, 2 մարտի: Երեկ «Հայրենասերների միութեան» շատ անդամներ տեսնում խուզարկութիւն եղաւ և լազեր, լէզան և Տիւրկի պատգամաւորները հարց ու փորձի ենթարկվեցան պարլամենտական մասնաժողովի առաջ: Այդ պատգամաւորները հաւատացնում էին, որ իրանք չեն պատկանում գաղտնի ընկերութեան, բայց և այնպէս մասնաժողովը վճռեց առաջարկել ժողովին նրանց դատաստանական պատասխանատուութեան ենթարկելու: Վախճանից ծովային միւնիստր, Պետերբուրգի նախկին ղեկաւոր, Ժորժէտ ԼՕՆԻՍ, 2 մարտի: Պէշտից հեռագրում են «Standard» լրագրին, որ աստորիական կառավարութիւնը հրամայել է միջոցներ ձեռք առնել Սերբիայի սահմաններում 20,000 մարդուց բաղկացած զինուոր զօրաւորելու տեղափոխելու համար:

ԲԵՂԳԻՅԱ, 2 մարտի: Միլանի հեռագրում է Բելգիայից, որպէս զի այցելէ Ֆրանց-Յոլթի կայսրին: Կրանից յետոյ նա մտադիր է այստեղ վերադառնալ մի քանի օրով:

ՎԻԵՆԱ, 2 մարտի: Այսօր տարածվեց մի բողոքովին շը վերատուգված լուր Միլան թագաւորի մահվան մասին, որը իբրեւ թէ ինքնասպանութեան, կամ նրա ղեմ եղած փորձի հետեւանք է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մարտի: Պոլտավայի նահանգապետ, զենեւալ-մայոր Եանկովսկի վճիռի նահանգապետ է նշանակված:

ՓԱՐԻԶ, 3 մարտի: Սենատը թոյլատրեց, որ Նալէ դատի ենթարկվի, իսկ պատգամաւորների ժողովը թոյլ տուեց, որ դատի ենթարկվին լազեր, լէզան և Տիւրկի պատգամաւորները: Դատի ենթարկելու համար սենատում ձայն տուին 213 հոգի 58-ի դէմ, իսկ պատգամաւորների ժողովում՝ 317 հոգի 214-ի դէմ: Բացի դրանից պատգամաւորների ժողովում ձայն տալուց հրաժարվեցան 49 պատգամաւորներ: Կալանաւորութիւններ դեռ ևս չեն եղած, բայց տնային խուզարկութիւններ Փարիզում և դաւանդում շարունակվում են:

ՎԻԵՆԱ, 3 մարտի: Միլանի անձնապահութեան վերաբերեալ լուրը կատարելապէս հերքվում է:

Երևանի հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԻՈՐ ՀԻՄՆԱԳԱՆՈՑ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ա մ ե ն օ Ր

Ա Ռ Ա Ւ Օ Տ Ն Ե Ր Ը

ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—9—11 ժ. վիրաբուժական, նաև ատամնաբու, սիֆիլիսի և աչքի ց.
ԳՐԻԳՈՐՅԱՆ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆԻՔԻՆԻՅԱ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11 1/2—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԵՎԵՍԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի ց. և սիֆիլիսի:
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի կանանց ց.
ԿՍԻՍԵՆԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ԳՆՈՒՄՍԿԻ—4 1/2—5 1/2 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էկկորտերապիա):
Հիւանդանոցում է մ ա ն կ ա ղ ա Ր ձ ու հ ի Վ օ ղ ե Ր:

Վճար—50 կ. Համախմբիչի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:

Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ՈՍՈՆԵՅԱԿԱՆ ԽՈՒՄԸ ՏՐԱԽԻՐՈՒՄ Է ՀԱՆՐԱՅԵԱԿ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՊԱՆԱՍԱՆԵԱՆԻ ԲԱՐԵԿԱՄԵՆԵՐԻՆ Լ ԵՐԵՎԱՆԻՆԻ ՆԵՐԿԱՅ ԼԻՆԵԼ ՎԱՂԸ ՄԱՐԻ 5-ԻՆ, ԿԻՐԱԿԻ ՕՐԸ ԺԱՄԸ 11-ԻՆ ՎԱՆՔԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՂՈՒՄ ՀԱՆՐԱՅԵԱԿԻ 1—1

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԷՔԻԱԹՆԵՐԻ
Հինգերորդ գիրքը:
Վաճառվում է Թիֆլիսի հայ գրավաճառանոցներում: Գինն է 50 կոպ.
Շուտով մամուլի տակ կը մտնի մեր ժողովածուի 7-րդ գիրքը: Գաւառական ուսուցիչներից և առհասարակ ձեռնաստ անձանց խնդրում ենք ուղարկել մեզ հետեւեալ նիւթերը.—հերթաթիւներ, ժողովրդական երգեր, աղօթքներ, առածներ, հանելուկներ, անէծքներ, օրհնութիւններ, երգումներ, սրբախոսութիւններ, փաղաքական խօսքեր, ֆան-գիւլումներ, մանկական խաղեր, և այլն: Նաև գաւառական բառեր, ոճեր և դարձուածներ: Ամեն տեսակ աւանդութիւն պէտք է գրել բուն տեղաւոր ստեղծող մեր հրատարակած գրքերից մի մի օրինակ: Մեր հասցէն՝ Թիֆլիս, T. Навасар-джанц, редакция журн. «Мурчъ»:
1—4 (2)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ
Հինգշաբթի, մարտի 16-ին, ՄԻՆԳՐԵԼԻԱ (MINGRELIE) շոգնաւոր, նաւապետ
ԺԻՌՈՒՆ (GIBOIN) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն,
Կ. Պոլիս և Մարսէլ: Տեղեկութիւնների մասին պէտք է զիմել ընկերութեան
գործակալներին, Բաթումում՝ Լէմոզլուի տան, Նարեկէժնայա, և Թիֆլիսում՝ նախկին Ար-
ժուէրի դպրէրէում, № 103.
1—2 (4—14)

ՀԱՅ ՍԵՍԱԻ
ԱՐԻՍՏՈՂՈՄ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ
ՌՈՒՍԵՐԷՆԻՑ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԴԻՐԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ
Գինն է 3 ռուբլի, ճանապարհի ծախսը գնողի վրա է:
Միանուագ քսանից աւելի գնողին զիջումն կը լինի:
Վաճառվում է ԲԱՅԱՌԱՊԵՍ ԽԷՂԻԿԷԼԻ Լ ԸՆԿ. գրավաճառանոցում, Թիֆ-
լիս, Գոլովինսկի Պրոսպեկտ, առաջին Գիմնազիայի հանդէպ:
39—40

ՀԵՐԱՄԻ ՄԵՐՄ
Ֆրանսիայի դեղին և սպիտակ շերտի ամենալաւ ցեղից պատրաստած ունեւ,
Պատուիրի մեթոդով: Ֆունար 60 ռուբլի, 5 մսխալը՝ 3 ռուբլի 50 կոպ., ճանապարհա-
ծախսով:
Հասցէն՝ Туансе, Черноморскій округъ, Варваринская Сельско-Хозяйст-
венная школа, Леону Степанянцу.
6—15

Abonnement-Einladung an
die meist verbreitete deutsche Wochenschrift:
Das Echo
(Stimmen aus allen Parteien.)
Wochenschrift für Politik, Literatur, Kunst und Wissenschaft.
Das Echo bringt allwöchentlich in unterhaltender Form Berichte über alle politischen, wirt-
schaftlichen, wissenschaftlichen und gesellschaftlichen Vorgänge, welche sich in Deutschland und Aus-
lande abspielen.
Das Echo ist kein Parteiblatt, sondern es läßt die interessantesten Stimmen aller Parteien
zu Worte kommen.
Das Echo widmet außerdem dem Leben der hohen Kreise eingehende Aufmerksamkeit.
Das Echo bringt in jeder Nummer ein bis zwei abgeschlossene Novellen, Erzählungen u.
s. w. aus der Feder bewährter, zeitgenössischer Schriftsteller.
Das Echo bringt informierende Notizen, Kritiken und Leseproben aus den bedeutendsten
Erscheinungen des internationalen Büchermarktes.
Das Echo betrachtet es insbesondere als seine Aufgabe, dem Leben und Treiben der
Deutschen im Auslande die liebevollste Aufmerksamkeit zuzuwenden.
Das Echo will somit unsern Landsleuten im Auslande ein „Vote aus der Heimat“ sein,
deshalb ist auch sein Abonnementspreis ein sehr niedriger. Es versendet die Expedition in Berlin
S. W. das Echo nach allen zum Weltpostverein gehörigen Ländern für 4 Mark 50 Pf. vierteljähr-
lich und für 17 Mark ganzjährig, nach den Ländern und Gebieten außerhalb des Weltpostvereins
für 23 Mark ganzjährig.—Zahlungen geschehen am raschesten und sichersten durch Postanweisung
oder durch Umweisung auf deutsche Banken.—Ebenso liefert jede deutsche Buchhandlung und Zei-
tungsagentur im Auslande das Echo zu den landesüblichen Preisen. Probenummern sind durch
die letzteren zu beziehen oder auch direkt von
J. H. Schorer,
Verlag des Echo, Berlin S. W.